

## ՎԱՂՈՒԱՆ ԲՈՂԲՈՋՆԵՐ

Երբ արտին մէջ երգելով,  
 Խաղա՛ղ հոգի, կ'աշխատեր,  
 Ըսպաննեցին: Տարին եզները ջուխտակ:  
 Վըկայ չըկար: Պիտի վրեժն ո՛վ կըշռէ. Դո՛ւ,  
 Ո՛վ շանթ, անոնց ետեւէն շուտ դու հասիր,  
 Որ լերան վրայ ամպամած  
 Խոժոռադեմ կը հըսկես.  
 Անշուշտ տեսար ամպի մը մուրթ բացուածքէն՝  
 Թէ ինչպէս վարը, բըռնի,  
 Եաթաղանին տակ սըրբագան բահն ինկաւ,  
 Եւ պոռթկաց խոնջ ճակատէն  
 Արիւնը տաք, վարդերուն պէս յունիսի:  
 Գայլի՛ եղեռն: Մըթընշաղին մէջ հիմակ  
 Ակօսներուն վըրայ լուռ  
 Բըզիկ բըզիկ կը պառկի:  
 Գիւղացիի խորշոմներուն մէջ աղուոր՝  
 Ուր արեգակն առողջ արիւնն եռեփեց  
 Քըրտինքը ա՛լ սառած է.  
 Աշխատանքի քըրտինքը սուրբ եւ բեղուն  
 Որ մինչ այսօր, ինչպէս արիւնը, եղաւ  
 Մըկըրտութիւնն Արարատեան մշակներուն:  
 Յերկէ խոնջած բազուկներն ա՛լ անգործ են.  
 Կուրծքը մըռայլ, թաւամագ,  
 Դեպի աստղերը, արձակ,  
 Շէջ հրաբուխ մ'է որ կ'ուզէ բոց երկընքէն  
 Դեպ Անհունին սեւ սառնութեան ժայթքելու.  
 Կողը տուած է հողին  
 Չոր մըշակեց ամրան դեղին հասկերուն